Հաստատված է
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության
24.03.2026թ. թիվ 54/04-24.03.2026 որոշմամբ
Վարչության նախագահ
---------- Ա. Առաքելյան

Ուժի մեջ է մտնում «30» «մարտ» 2026թ.
Հրապարակման ամսաթիվը «24» «մարտ» 2026թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել, մանրամասների համար դիմել Բանկ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Միջազգային արագ դրամական փոխանցումների

ԵՐԵՎԱՆ 2026

1. Սույն տեղեկատվական ամփոփագիրը պարունակում է "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հետ համագործակցող միջազգային արագ դրամական փոխանցման համակարգերով դրամական փոխանցումների կատարման մասին տեղեկատվություն:

2. Բանկի հետ համագործակցող միջազգային արագ դրամական փոխանցման համակարգերն են՝ "MONEYGRAM", "INTELEXPRESS", "GMT", Ria Money Transfers", "MONEYTUN", "UBPAY" և այլ վճարային համակարգերը, որոնց միջոցով դրամական փոխանցումների սակագները և առանձնահատկությունները սահմանված են սույն տեղեկատվական ամփոփագրի հավելված 1-ով:

Օտարերկրյա պետություններում գումարը ստանալու դեպքում, կարող են գործել տվյալ պետության օրենսդրությամբ կամ սպասարկման կետի քաղաքականությամբ նախատեսված սահմանափակումներ /գումարի մեծության, արժույթի և այլն/:

3. Արագ դրամական փոխանցումներն իրականացվում են ֆիզիկական անձ հաճախորդների միջև:

4. Արագ դրամական համակարգերով փոխանցում իրականացնելու համար փոխանցողը՝

- ներկայացնում է Բանկին իր անձը հաստատող փաստաթուղթը ,
- նշում է գումարի ստացման երկիրն ու քաղաքը,
- ներկայացնում է փոխանցման ստացողի և այլ անհրաժեշտ տվյալները,
- վճարում է փոխանցվող գումարը և համապատասխան միջնորդավճարը (սահմանվում է Համակարգերի օպերատորների/Բանկի կողմից)՝ ստորագրելով փոխանցման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Փոխանցող հաճախորդին բանկը տրամադրում է գումարի փոխանցման ժամանակ համակարգում ձևավորված ունիկալ/հսկիչ կոդ, որը փոխանցողը պետք է տրամադրի ստացողին գումարի ստացման համար:

5. Արագ դրամական համակարգերով գումարի ստացում իրականացնելու համար ստացողը՝

- ներկայացնում է Բանկին իր անձը հաստատող փաստաթուղթը1,
- հայտնում է Փոխանցման ունիկալ/հսկիչ կոդ,
- նշում է գումարի չափն ու արժույթը,
- ներկայացնում է փոխանցում իրականացրած անձի անուն, ազգանուն և եթե նշված է նաև հայրանունը,
- ստորագրում է գումարի ստացումը հավաստող փաստաթղթերը, տրամադրում է այլ անհրաժեշտ տեղեկատվություն գումարի ստացման համար և ստանում գումարը:

6. Վավերականության ժամկետն անցած փաստաթղթերով արգելվում է կատարել գումարների ստացում կամ փոխանցում:

7. Դրամական միջոցների փոխանցման/ստացման կատարման առավելագույն ժամկետը 1-10 րոպե է, բացառությամբ այն դեպքերի,երբ համակարգի կողմից իրականացվում է լրացուցիչ ստուգում

8. Փոխանցողը, կատարված փոխանցման մեջ (եթե հարցման արդյունքում պարզվում է, որ գումարը վճարված չէ), կարող է կատարել փոփոխություն, փոխանցման չեղյալացում կամ փոխանցված գումարի հետ վերադարձ՝ բանկում ներկայացնելով համապատասխան դիմում:

9. Փոխանցված գումարի փոփոխությունն ու չեղյալացումը կատարվում է անմիջապես համաձայն փոխանցման համակարգի կանոնների:

10. Փոխանցված գումարի վերադարձը կատարվում է 1-3 բանկային օրվա ընթացքում՝ կախված միջազգային դրամական փոխանցման համակարգից: Փոխանցված գումարի հետ վերադարձի դեպքում հիմնականում հաճախորդին վերադարձվում է միայն փոխանցված գումարը՝ **առանց միջնորդավճարի** (համաձայն վճարային համակարգերի կանոնների):

11. Բանկը գործարք կատարող հաճախորդին տրամադրում է մատուցված ծառայության կատարման վերաբերյալ անդորրագիր:

12. Հաճախորդի կողմից բողոքարկման ընթացակարգը և ժամկետները սահմանվում է Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

13. "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ում գումարների փոխանցումն իրականացվում է տարբեր արժույթներով՝ համաձայն միջազգային դրամական փոխանցման համակարգերի կողմից սահմանած արժույթների և մեկ փոխանցման համար սահմանված առավելագույն սահմանաչափի (մանրամասներին կարող եք ծանոթանալ սույն ամփոփագրում վճարային համակարգերի համար նախատեսված համապատասխան բաժիններում): Դրամական փոխանցումը ստացող հաճախորդից, փոխանցումը ստանալու համար, որևէ կոմիսիոն վճար չի գանձվում: Եթե հաճախորդը ցանկություն է հայտնում դրամական փոխանցումը ստանալ ՀՀ արժույթով, ապա դրամական փոխանցումը փոխարկվում է ՀՀ արժույթով՝ տվյալ պահին "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ-ում վճարային համակարգերով գումարների ստացման համար սահմանված արտարժույթի փոխարժեքով:

14. Փոխանցումների վաղեմության ժամկետը սահմանվում է համաձայն վճարային համակարգերի:

15. ՀԱՃԱԽՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՋԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

16. Բանկը "Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից "Ճանաչիր քո հաճախորդին" ("Know your customer") սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին: ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների, կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ սպառողների վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»:

17. Ելնելով տարաբնույթ հանգամանքներից հաճախորդից սպասարկման ընթացքում Բանկի աշխատակիցը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

18. Արագ դրամական փոխանցումների ուղղություններին (երկիր, քաղաք, սպասարկման կետեր) սակագներին Հաճախորդը կարող է ծանոթանալ www.aeb.am կայքից կամ յուրաքանչյուր համակարգի կայք էջերից:

19. Արագ դրամական փոխանցման համակարգերով փոխանցումների և վճարումների կատարումն իրականացվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում՝ գործառնական ժամերի ընթացքում, իսկ գումարների ստացումը հնարավոր է նաև SMS հաղորդագրության, զանգի, AEB MOBILE / AEB ONLINE համակարգերի միջոցով(My Transfer ծառայության ամփոփագիրը հասանելի է բանկի կայքէջում՝ https://aeb.am/uploads/my_transfer_ampopagir.pdf):

20. Արագ դրամական փոխանցման համակարգերով իրականացված գործարքների վերաբերյալ Բանկը կարող է տրամադրել տեղեկանք ցանկացած ժամկետով: Տեղեկանքի արժեքն է 5000 ՀՀ դրամ:

21. Լրացուցիչ ծառայությունների մատուցման վերաբերյալ, մասնաճյուղերի ցանկին ու դրանց գործառնական ժամերին կարող եք ծանոթանալ "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ինտերնետային կայքում՝ www.aeb.am կամ զանգահարել;ով +37410510910, 8686 հեռախոսահամարներով:

22. “ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ” ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՌ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» - https://www.fininfo.am :

23. Տարբեր վճարային համակարգեր Բանկի հետ համատեղ կարող են իրականացնել տարբեր ակցիաներ, որոնց ընթացքում հնարավոր է փոխանցումների սակագների փոփոխություններ: Հատուկ առաջարկներին և ակցիաներին կարող եք ծանոթանալ անցնելով https://www.aeb.am/hy/hatuk-arajarkner հղմամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ 1

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ԱՐԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1940 թվականին ստեղծված ամերիկյան "MoneyGram Payment Systems, Inc." ընկերության և նրա բազմաթիվ արտասահմանյան գործընկերների կողմից ներդրված "MONEYGRAM" դրամական փոխանցումների միջազգային համակարգը գործում է ավելի քան 200 երկրներում և ներառում է շուրջ 350,000 սպասարկման կետեր: Համակարգն ապահովված է տեղեկատվության մշակման և կապի ժամանակակից միջոցներով, որոնց շնորհիվ յուրաքանչյուր փոխանցում կատարվում է անվտանգության համաշխարհային չափանիշներին համապատասխան հուսալի համակարգով:

Մեկ գործարքի առավելագույն չափ	9,999.9 ԱՄՆ դոլար կամ 7,000 Եվրո
Սպասարկվող արժույթ	Դրամական միջոցների փոխանցումները կատարվում են միայն ԱՄՆ դոլարով, իսկ վճարումները՝ նաև Եվրոյով:
Փոխանցման արագություն	10 րոպե
Փոխանցման վաղեմության ժամկետ	45 օր
Փոխանցման համար գանձվող միջնորդավճար այլ երկրներ	
1-100	13
100.01-250	21
250.01-400	25
400.01-600	33
600.01-800	41
800.01-1000	51
1000.01-1200	61
1200.01-1800	76
1800.01-2500	101
2500.01-5000	151
5000.01-7500	226
7500.01-10000	301
Փոխանցման համար գանձվող միջնորդավճար (դեպի Ուկրաինա, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ղազախստան, Ուզբեկստան, Ղրղզստան)	

1-100	3
100.01-200	5
200.01-300	7
300.01-400	9
400.01-500	11
500.01-750	15
750.01-1,000	20
1,000.01-1,500	29
1,500.01-2,000	38
2,000.01-2,500	47
2,500.01-3,000	56
3,000.01-3,500	65
3,500.01-4,000	74
4,000.01-4,500	84
4,500.01-5,000	93
5,000.01-5,500	96
5,500.01-6,000	100
6,000.01-6,500	110
6,500.01-7,000	120
7,000.01-10,000	140
Փոխանցման համար գանձվող միջնորդավճար (դեպի Ալբանիա, Ավստրիա, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ջիբրալթար, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մակեդոնիա (Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն), Մալթա, Չեռնոգորիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թուրքիա, Միացյալ Թագավորություն)	
0.00 - 200.00	3 ԱՄՆ դոլար
200.01 - 10 000.00	1.8%

Լրացուցիչ տեղեկությունների, սպասարկման կետերի և սակագների ցանկին ծանոթանալու համար այցելեք՝ www.moneygram.com:

"INTELEXPRESS" համակարգը ներկայացված է ավելի քան աշխարհի 50 երկրում՝ մասնավորապես Վրաստանում ունի սեփական 30 մասնաճյուղ և ավելի քան 200 սպասարկման կետեր, Հունաստանում՝ սեփական 15 մասնաճյուղ, Իտալիայում՝ 900, Իսպանիայում՝ 600, Իսրայելում՝ 60 սպասարկման կետ: Համակարգը գործում է նաև Բելգիայում, Նիդեռլանդներում, Մեծ Բրիտանիայում, Ուկրաինայում, Շվեյցարիայում և այլուր: Այն հնարավորություն է ընձեռում ֆիզիկական անձ հաճախորդներին առանց հաշվի բացման, կատարել ակնթարթային դրամական փոխանցումներ:

Մեկ գործարքի առավելագույն չափ	Համաձայն փոխանցման երկրի օրենսդրության
Սպասարկվող արժույթ	ԱՄՆ դոլար Եվրո ՌԴ ռուբլի Վրացական լարի (միայն վճարում) ՀՀ դրամ
Փոխանցման արագություն	10 րոպե
Փոխանցման վաղեմության ժամկետ	Մինչև 360 օր՝ կախված փոխանցման երկրից

Փոխանցման համար գանձվող միջնորդավճարներ

Երկիր	Փոխանցման արժույթ	Ստացման արժույթ	Սակագին
Վրաստան	EUR/USD/RUR/AMD	EUR/USD/RUR/GEL	1.00%
Վրաստան (հաշվի համալրում)	EUR/USD/GEL/AMD	GEL	1.00%
Ուկրաինա	EUR/USD/AMD	EUR/USD	1.00%
Ուկրաինա (քարտի համալրում)	EUR/USD/AMD	EUR/USD	1.00%
Մոլդովա	EUR/USD/AMD	EUR/USD/MDL	1.00%
Ուզբեկստան	EUR/USD	USD	1.00%

Ուզբեկստան (քարտի համալրում)	EUR/USD	UZS	1.00%
Ալբանիա	EUR	EUR	2%; min: 5 EUR
Հունաստան	EUR/USD	EUR	1.50%
Կիպրոս	EUR/USD	EUR	1.50%
Իսպանիա	EUR/USD	EUR	1.80%
Իտալիա	EUR/USD	EUR	1.80%
Նեպալ	EUR/USD	NPR	1.50% min 5USD
Շվեյցարիա	EUR	CHF	1.80%
Ռումինիա	EUR	EUR/RON	1.8% min: 2EUR
Ռումինիա (հաշվի համալրում)	EUR	EUR/RON	1%; min: 2 EUR/USD
Հնդկաստան Բանգլադեշ Ինդոնեզիա Ֆիլիպիններ Պակիստան Շրի-Լանկա	EUR/USD/AMD	INR BDT IDR PHP PKR LKR	0-1000 5 USD/EUR 1000.01-1250 25 USD/EUR 1250.01-1500 30 USD/EUR 1500.01-1750 35 USD/EUR 1750.01-2000 40 USD/EUR 0-350000 2000 AMD 350000.01-470000 10000 AMD 470000.01-550000 12 000 AMD 550000.01-650000 14 000 AMD 650000.01–750000 15 000 AMD
ԱՄՆ	USD	USD	3% min 3 USD
Իսրայել	EUR/USD	EUR/USD	1.50%
Չինաստան	EUR/USD	CNY	10 EUR/USD
Կանադա	EUR/USD	CAD	10 EUR/USD
Վիետնամ	EUR/USD	EUR/USD/VND	0-200 5 USD/EUR 200.01-300 8 USD/EUR 300.01-400 11 USD/EUR 400.01-500 13 USD/EUR 500.01-750 16

			USD/EUR 750.01-1000 22 USD/EUR 1000.01 -1250 25 USD/EUR 1250.01 -1500 30 USD/EUR 1500.01-1750 35 USD/EUR 1750.01 -2000 40 USD/EUR

Վրացական բանկերի հաճախորդների հաշիվներին հնարավոր է իրականացնել փոխանցումներ 1% սակագնով: Փոխանցումների իրականացման համար անհրաժեշտ է ստացողի բանկի անվանումը, հաշվեհամարը (IBAN) և ստացողի անուն-ազգանունը:

Վրացական Bank of Georgia բանկի հաճախորդների հաշվեհամարներին հնարավոր է փոխանցել USD/EUR/GEL, իսկ վրացական այլ բանկերին՝ GEL.

Ուկրաինական քարտերը հնարավոր է համալրել 1% սակագնով: Փոխանցումների իրականացման համար անհրաժեշտ է ստացողի քարտի վրա դաջված 16 նիշերը, ստացողի անուն-ազգանունը և հեռախոսահամարը: Տվյալ փոխանցումների առավելագույն գումարի չափը կազմում է 5000ԱՄՆ դոլար/4500 Եվրո:

"INTELEXPRESS" համակարգը, որը Ուզբեկստանում սպասարկում են "Գարանտ" և "Օրիենտ ֆինանս" բանկերը, առաջարկում է Ուզբեկստանում նոր ծառայություն՝ Uzcard և Humocard քարտերի համալրումներ 1% սակագնով: Քարտային հաշիվները համալրվում են տեղական արժույթով UZS և 1 փոխանցման առավելագույն սահմանաչափը կազմում է 16 499 999 UZS:

Փոխանցումներ դեպի Կանադայի հաշիվներին

IntelExpress համակարգի միջոցով հնարավոր է գումարներ փոխանցել անմիջապես ստացողի Կանադայի բանկային հաշվին, որոնք հասանելի են լինում **1-2** աշխատանքային օրվա ընթացքում՝ կախված է ստացող բանկից:
Վճարման արժույթը CAD (Կանադական դոլար)
Սահմանաչափը 25 000 CAD մեկ փոխանցման և մեկ օրվա համար:
Ստացողի անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

- Ստացողի անուն, ազգանուն,
- Ստացողի քաղաքացիությունը,
- Հաշվեհամարը,
- Բանկի անվանումը,
- Routing number- (բաղկացած է 5 նիշից):

Փոխանցումներ դեպի Չինաստանի հաշիվներին
Դեպի Չինաստան փոխանցումներ հնարավոր է կատարել 2 տարբերակով.

- **UnionPay Card (քարտին),**
- **AliPay (դրամապանակին)**

Վճարման արժույթ CNY (չինական յուան)

Փոխանցումներ UnionPay Card –ին
Ստացողի անհրաժեշտ տեղեկությունները ներկայացված է ստորև.

- Ստացողի ամբողջական անունը (Ազգանուն, Անուն),
- Ստացողի քաղաքացիությունը,
- Ստացողի ID (ազգային անհատական համար համարը, որը բաղկացած է 18 նիշից);

Սահմանաչափեր

- Մեկ փոխանցման սահմանաչափը կազմում է **35 000 CNY (5000USD),**
- Օրական փոխանցման սահմանաչափը կազմում է **10 000 USD համարժեք CNY**
- Տարեկան փոխանցման սահմանաչափը կազմում է **50 000 USD համարժեք CNY**

Փոխանցումներ AliPay դրամապանակի համալրման համար
Ստացողի անհրաժեշտ տեղեկությունները ներկայացված է ստորև.

- Ստացողի ամբողջական անունը (Ազգանուն, Անուն),
- Ստացողի քաղաքացիությունը,
- Ստացողի հեռախոսի համարը լրացվում է **Card#** դաշտում հետևյալ ֆորմատով՝ +**********

Սահմանաչափեր

- Մեկ փոխանցման սահմանաչափը կազմում է **50 000 CNY**
- Տարեկան փոխանցման սահմանաչափը կազմում է **300 000 CNY** և ամսական **5** փոխանցման հնարավորություն: Եթե հաշիվը կցված է բանկային հաշվին ապա սահմանաչափը ավելանում է, կազմում է տարեկան **600 000 CNY** և և ամսական **10** փոխանցման հնարավորություն:

Մինչ գումարը փոխանցելը, խորհուրդ է տրվում տեղեկացնել ստացողին , որ կստանա հաստատման կոդ իր բջջային հեռախոսահամարին, որը վավեր կլինի 48 ժամ:
Եթե գումարը հասանելի չլինի 48 ժամ հետո, We Chat – ը ավտոմատ կերպով կվերադարձնի գումարը:
Նշում.. Ստացողը պետք է կարգավորի իր **WeChat** հաշիվը, որպեսզի կարողանա արտերկրից գումար ստանալ: **WeChat** հաշվին գումար փոխանցելու համար ստացողը պետք է կատարի հետևյալ կարգավորումները

1. Մուտք գործի **WeChat** հավելված և որն ունի (Cross border Remittance We-Remitance) – սեղմել
2. " I wan to receive money" (<<Ես ուզում եմ ստանալ գումար>>)
3. Կարգավորեք ստացման վճարային քարտը – Սպասեք գումարի ստացման

(Կարող եք սեղմել վճարման ստացման մեթոդի վրա և ընտրել գումարը ստանալ **WeChat Balance** -ով կամ **WeChat**-ին կցված բանկային քարտով): Հնարավոր է իրականացնել ՌԴ-ից ՀՀ փոխանցված գումարների վճարումներ:

Լրացուցիչ տեղեկությունների, սպասարկման կետերի և սակագների ամբողջական ցանկին ծանոթանալու

համար այցելեք՝ www.inteliexpress.com

GMT վճարային համակարգով ԱՄՆ-ից Հայաստան փոխանցված գումարները կարող եք ստանալ նաև Ձեր տանը՝ առանց Բանկ այցելելու՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ աշխատակիցների կողմից փոխանցված գումարի առաքման միջոցով: Նշված ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է, որ փոխանցողը փոխանցում իրականացնելիս ընտրի տվյալ ծառայությունը, տրամադրի ստացողի անձնագրային տվյալները, հասցեն և հեռախոսահամարը:
GMT վճարային համակարգով դրամական միջոցների առաքումը շահառուներին մատուցվում է ԱՆՎՃԱՐ:

Մեկ գործարքի առավելագույն չափ	Սահմանված չէ
Սպասարկվող արժույթ	ԱՄՆ դոլար ՀՀ դրամ
Գործարքների տեսակը	Դրամական միջոցների միայն ստացում
Փոխանցման արագություն	10 րոպե
Փոխանցման վաղեմության ժամկետ	30 օր

Լրացուցիչ տեղեկությունների, սպասարկման կետերի և սակագների ամբողջական ցանկին ծանոթանալու համար այցելեք՝ www.gmtnorthamerica.com:

Ria Money Transfers վճարահաշվարկային համակարգը ներկայումս ունի ավելի քան 505.000 սպասարկման կետեր, որոնք գործում են աշխարհի 182 երկրներում՝ ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Շվեդիա, Ավստրալիա և այլն:

Մեկ գործարքի առավելագույն չափ	5,000 ԱՄՆ դոլար/5000 Եվրո
Ամսական առավելագույն սահմանաչափ	5,000 ԱՄՆ դոլար/5000 Եվրո
Տարեկան առավելագույն սահմանաչափ	30,000 ԱՄՆ դոլար/30,000 Եվրո
Սպասարկվող արժույթ	ԱՄՆ դոլար Եվրո
Փոխանցման արագություն	15 րոպե
Փոխանցման վաղեմության ժամկետ	21 օր

Փոխանցման համար գանձվող միջնորդավճար

1. Ուկրաինա, Վրաստան, Մոլդովա, Իսրայել, Հունաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան.

Փոխանցվող գումար	Փոխանցման սակագին USD/EUR
0.01-200.00	2 USD/EUR
200.01-5000.00	0.9 %

2. Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Չեխիա, Կիպրոս, Խորվաթիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսենբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Ռումինիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Մեծ Բրիտանիա,ԱՄՆ և Կանադա.

Փոխանցվող գումար	Փոխանման սակագին
0.01-200.00	4 USD/EUR
200.01-5000.00	2 %

3. Այլ երկրներ.

Փոխանցվող գումար	Փոխանցման սակագին USD/EUR
0.01-200.00	6 USD/EUR

200.01-5000.00	3 %

Համակարգով հնարավոր է համալրել ուկրաինական բանկի հաշվիները (IBAN-29 նիշ է) կամ վճարային քարտերը՝ նշելով քարտի վրա դաջված 16 նիշերը:

Փոխանցման արժույթ՝ ԱՄՆ դոլար կամ ԵՎՐՈ:

Վճարային քարտերի համալրումները կատարվում են անմիջապես, իսկ հաշիվների դեպքում Приватбанк–ի հաշիվները համալրվում են անմիջապես, իսկ այլ բանկի հաշիվները ՝ 1 ժամվա ընթացքում:

Приватбанк–ի համալրումներ կարելի է կատարել ԱՄՆ դոլարով/Եվրոյով առավելագույնը 5000 ԱՄՆ դոլար կամ 4500 ԵՎՐՈ չափով (ստացման արժույթ – USD, EUR, UAH), իսկ այլ բանկերի դեպքում 1000 ԱՄՆ դոլար, որի ստացման արժույթը ուկրաինական գրիվնա է(UAH):

Փոխանցման սակագինը.

Գումար	**Սակագին**
0.01 - 200.00	2 USD/EUR
200.01 -5,000.00	0.7%

ՀՀ-ում գործում է հաճախորդների աջակցման կենտրոն +374 94 23 59 00
Աշխատանքային ժամեր - Երկ.-ուրբաթ 09:00-18:00

Լրացուցիչ տեղեկությունների, սպասարկման կետերի և սակագների ամբողջական ցանկին ծանոթանալու համար այցելեք՝ www.riafinancial.com :

MONEYTUN վճարային համակարգով հնարավոր է իրականացնել փոխանցումներ և վճարումներ դեպի ԱՄՆ՝ Կալիֆորնիայի ու Նևադայի նահանգներ և հակառակ ուղղությամբ, ՌԴ քարտերի, Հնդկաստան, ԱՄՆ, ԵՄ հաշիվների համալրումներ:

Մեկ փոխանցման առավելագույն չափը	10,000 ԱՄՆ դոլար
Սպասարկվող արժույթ	ԱՄՆ դոլար ՀՀ դրամ ՌԴ ռուբլի
Փոխանցման արագություն	10 րոպե
Փոխանցման վաղեմության ժամկետ	1 տարի

Փոխանցման համար գանձվող միջնորդավճար և այլ տեղեկատվություն

Երկիր և տեսակ	Սակագին	Փոխանցման արժույթ	Ստացման արժույթ	Առավելագույն գումար	Փոխանցման տևողություն
ՌԴ (քարտեր)	1%	ՌԴ ռուբլի	ՌԴ ռուբլի	1 փոխանցումը 400.000, ՌԴ ռուբլի, օրական 700.000 ՌԴ ռուբլի	2-3 րոպե
Հնդկաստան (հաշիվ)	1%	ԱՄՆ դոլար	Հնդկական ռուփի	5000 ԱՄՆ դոլար	1 աշխատանքային օրվա ընթացքում
ԱՄՆ (կանխիկ)	1%	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	10000 ԱՄՆ դոլար	անմիջապես
ԱՄՆ (հաշիվ)	1%	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	10000 ԱՄՆ դոլար	1 աշխատանքային օր հետո
ԵՄ (հաշիվ)	1%	ԱՄՆ դոլար	Եվրո	10000 ԱՄՆ դոլար	1 աշխատանքային օրվա ընթացքում
China UnionPay card	1%	ԱՄՆ դոլար	Չինական յուան	5000 ԱՄՆ դոլար	1 աշխատանքային օրվա ընթացքում

Հաշիվների համալրման համար անհրաժեշտ է հետևյալ տեղեկատվությունը.

ՌԴ քարտերի/UnionPay card-երի համալրման համար անհրաժեշտ է.

- Քարտատիրոջ անուն, ազգանուն
- Քարտի վրա դաջված թվերը

Հնդկաստանի հաշիվների համալրման համար անհրաժեշտ է.

- Անուն, ազգանուն,
- Հաշվեհամար,
- IFS համար

ԱՄՆ հաշիվների համալրման համար անհրաժեշտ է.

- Անուն, ազգանուն
- Նահանգ, հասցե,
- Հեռախոս,
- Հաշվեհամար,
- Routing number /9 նիշ/,
- Փոխանցման նպատակ

SEPA փոխանցումներ

ԵՄ հաշիվների համալրման համար անհրաժեշտ է.

- Անուն, ազգանուն,
- Երկիր,
- Հեռախոս,
- IBAN,
- SWIFT,
- Փոխանցման նպատակ

Լրացուցիչ տեղեկությունների, սպասարկման կետերի և սակագների ամբողջական ցանկին ծանոթանալու համար այցելեք՝ www.moneytun.com:

UBPAY հայաստանյան վճարահաշվարկային համակարգի միջոցով հնարավոր է առանց հաշվի բացման վայրկյանների ընթացքում փոխանցումներ կատարել ՀՀ-ից դեպի ՀՀ, ՌԴ, Ղազախստան, Ղրղզստան, Ուզբեկստան, Հունաստան, Իսրայել, Կիպրոս և հակառակ ուղղությամբ:

Փոխանցման սահմանաչափեր	**Մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանվում է.** • 5 000 000 (հինգ միլիոն) դրամը, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ՀՀ դրամով, • 10 000 (տասը հազար) ԱՄՆ դոլարը, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ԱՄՆ դոլարով. • 10 000 (տասը հազար) եվրոն, եթե դրամական փոխանցումն իրականացվում է եվրոյով, • 500 000 (հինգ հարյոր հազար) ռուսական ռուբլին, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ռուսական ռուբլով: **Մեկ գործարքի նվազագույն գումարը սահմանվում է.** • 1 000 (մեկ հազար) դրամից, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ՀՀ դրամով, • 2 (երկու) ԱՄՆ դոլարից, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ԱՄՆ դոլարով. • 2 (երկու) եվրոյից, եթե դրամական փոխանցումն իրականացվում է եվրոյով, • 100 (մեկ հարյուր) ռուսական ռուբլուց, եթե դրամական փոխանցումն իրականացվում է ռուսական ռուբլով: **1 ամսվա ընթացքում 1 անձի փոխանցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել.** • 20 000 000 (քսան միլիոն) դրամը, կամ • 50 000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարը, կամ • 50 000 (հիսուն հազար) եվրոն, կամ • 5 000 000 (հինգ միլիոն) ռուսական ռուբլին:
Սպասարկվող արժույթ	ԱՄՆ դոլար ՌԴ ռուբլի Եվրո ՀՀ դրամ
Փոխանցման արագություն	10 րոպե

Փոխանցման վաղեմության ժամկետ	180 օր

Փոխանցումների սակագները և արժույթները

Երկիր	Ծառայության տեսակը	Փոխանցման արժույթ	Վճարվող արժույթ	Հաճախորդի միջնորդավճար	Հաճախորդի միջնորդավճար եթե մուտքագրման արժույթը ՀՀ դրամ է
Հայաստան	Վճարումը կանխիկով	AMD, USD, EUR, RUB	AMD, USD, EUR, RUB	**1%***	
Հունաստան	Վճարումը կանխիկով	EUR	EUR	**1.50%**	
Կիպրոս	Վճարումը կանխիկով	EUR	EUR	**1.50%**	
Իսրայել	Վճարումը կանխիկով	USD	USD	**2.20%**	
Ղազախստան	Վճարումը կանխիկով	USD	USD	**1.80%**	
Ուզբեկստան	Վճարումը կանխիկով	USD	USD	**2.00%**	
Ռուսաստան	Վճարումը կանխիկով	AMD, RUB	RUB	**1%***	
ԱՄԷ	Փոխանցում հաշվին	AMD, USD, EUR	AED	**1.1%, նվազ. 8 EUR/USD**	Մինչև 380 000 AMD - 4000 AMD 380 000 AMD և ավել - 0%
Հնդկաստան	Փոխանցում հաշվին	AMD, USD, EUR	INR	**1%, նվազ. 3 EUR/USD**	Մինչև 150 000 AMD - 1500 AMD 150 000 AMD և ավել - 0%
Կանադա	Փոխանցում հաշվին	AMD, USD, EUR	CAD	**1.2%, նվազ. 5 EUR/USD**	Մինչև 200 000 AMD - 2500 AMD 200 000 AMD և ավել - 0%
Չինաստան	Alipay բջջային դրամապանակ	AMD, USD, EUR	CNY	**1%, նվազ. 7 EUR/USD**	Մինչև 350 000 AMD - 3500 AMD 350 000 AMD և ավել - 0%

ԱՄՆ	Փոխանցում հաշվին	AMD, USD, EUR	USD	**1.3%, նվազ. 5 EUR/USD**	Մինչև 200 000 AMD - 2500 AMD 200 000 AMD և ավել - 0%

Փոխանցված գումարները կարող են ստանալ kwikpay.ru կայքում նշված քաղաքներում/սպասարկման կետերում: